

մանաւանդ բարեյարդար բան մը, աւելի՛ն իսկ՝ հին սեղմ
ու պայքարող յարաբերութիւններէն դէպ ի նոր արդար
ու անդորր համերաշխական գործունէութիւնն անցք մը,
պէտք է երկրայիլ. աշխարհ կը տատաւուի նոր և
անդորր շրջանի մը. —

« Պարագայց յաւիտենից առնու ըսկիզբըն կարգ
անդրէն⁽¹⁾ ».

Թէպէտ յամրօրէն այլ իրօրէն՝ Իրիսի եօթը չքնաղ
ու յաւիտենական գոյներէն առ այժմ ամէնէն կարեւորն
և կարապետը՝ կանաչը միայն ցոլացունելով անպատ-
րաստ յարդարումի մը սեմոց վրայ, Հերի՛ք է որ
գիտնանք յարգն ու սահմանը:

Թուրքահայք՝ որոց դիրքը աւելի դիպող տրամադ-
րուած է բնուստ ցամաքային բո՛ւն վաճառականութեան
և միջնորդութեան, պէտք է լրջութեամբ պատրաստ-
ուին այդ շրջանին և թօթափեն իրենց վրայէն ինչոր կան
անցեալէն կնճիւղի, կռիւի, վրէժի, պայքարի յետադի-
մական բերումներ ու տգիտութիւններ: Պէտք է մանա-
ւանդ ոյժ տան իրենց ցամաքային վաճառականութեան,
որուն չա՛տ նպաստաւոր ալ է Փոքր-Ասիայի ցամաք ու
հազորդարար կալուածը: Ինչպէս հին ժամանակ՝ Յոյնք
և Փիւնիկեցիք, և նորումս Հոլանտացիք Անգլիացիք Ի-
տալացիք ծովային վաճառականութեան, այսպէս ալ
Հայք և Հրեայք ցամաքային վաճառականութեան վար-
պետներն եղած են ու պէտք է որ ըլլան այսուհետև:
Կովկասէն Պարսկաստանէն մինչև Հնդկաստան և Ճա-
բոնիա բա՛ց է իրենց առջև: Այս կողմէն՝ մանաւանդ
մեր գաւառացւոց համար՝ բացուած կը համարուին նո-
րանոր դուռներ՝ հեռագրական, թղթատարական, երկա-
թուղիական նոր նոր դիւրութիւններով: Պէտք է մա-
նաւանդ՝ տեղական ընթացիկ լեզուներու հետ՝ մշակել
նաև անգղիերէն գործնական մեծ լեզուն, զոր կը խօ-

(1) Վիրգիլ, Հովուականք.